

նապարին բռնեցին և նղեն նախմիրը գերեվաճառ
վաճառականաց, որք նոցա խոստանելով մի ծրի
հանապարհորդութիւն ի Պաղեստին, վաճառեցին Ա.փ-
րիկոյ Արարացոց:

(Հ-Ր-Ա-Ն-Ք-Ա-Ը):

թ. չ. սթոքելեան

ԵԿԵՂԵՑԻՔ

Վ-ԵԴ-ԵՐԾ-ԵՊԵՏ-ՅԵԳ-ԵՐՒ

(Հ-Ր-Ա-Ն-Ք-Ա-Ը-Ա-Ը):

Տաճարի հարաւային խորանի դռնէն
կմանեն երկու խորանը ևս մէջէմէջ դըռ-
ներով:

Հիւսիսային և արևելեան կողմի խո-
րանները յարդարեց պահարան եկեղեցա-
կան բոլոր թանկագին զարդուց և մասանց
սրբոց՝ իրեւ թանգարան հնութեանց՝
գեղեցիկ գարակներով. որոց յառաջնում
զետեղեց զգեստք, արծաթեղին սպասք և
հնութիւնք. երկրորդի մէջ բոլոր սրբու-
թիւնք. իսկ հարաւային խորանը օրհնելով
անուամբ սրբոյն Վ-Է-Կորգայ զօրավարի, մե-
ծամեծ գարակներով զարդարեց՝ առ ձեռն
գործադրելի սպասուց համար պահարան:

Եյս երեք խորանաց կիսագմբէթներու
գլուխը ոսկեզօծ մեծ խաչերով զարդարեց,
և կապարով ծածկեց:

Եկեղեցւոյ մէջ հին խորանների դըռ-
ները բարձրացրուց և կամարակապ բա-
րաւորեց. առաջին դասերը որպէս և առ-
եանը Վստուածածնի սեղանոյ յառաջ՝
թափուածու և ծաղկաձեւ երկաթի վան-
դակներով պատեց. Խջման տեղի սեղանոյ
ատեանը ևս արձակ լինելու համար հան-
դիսաւոր օրերում Եկեղեցական ուխտը
թափօր կանգնելու, Եղիազար Կաթու-

ղիկոսի դրած երկու ստուար քարերը վեր-
ցնել տուաւ:

Իսկ Եկեղեցին զարդարեց ջահաճեւ ա-
պակեայ գեղեցիկ կանթեղներով, որպէս
առաջի դասը, նոյնապէս և Խջման տեղւոյ
Կաթուղիկէի շրջապատը. ըստ որոյ և Ե-
կեղեցւոյ միջին վայելչութիւնը համակեր-
պելու՝ ըստ մեծ վայելչութեան անուանն,
Եւադ խորանի և սրբոյն Ատեփաննոսի և
սուրբ Յովհաննու սեղանների համար
թանկագին վարագոյրներ բերել տուաւ,—
նուերբ Տփիսիսեցի բարեպաշտից.—կարմիր
մախմուր աւագ սեղանին, և գեղին ծաղ-
կեայ աթլաս երկու սեղաններին:

Տաճարի այս շինութեանց հետ Կաթու-
ղիկոսարանը ևս զարդարեց Ա-Կ-Հափառ
Հայրապետը վայելուչ շէնքերով. Կա-
թուղիկոսարանի մաից դուռը՝ որ իւր նեղ
և անձուկ փոքրկութեամբ անվայել էր
Կաթուղիկոսական տան, փակեց զայն, և
նորանից ինն կանգուն դէպի ի հիւսիս Կա-
թուղիկոսարանի ներքնայարկը բանալով,
սենեկաց միջոցը կարեց և մեծ ու կա-
մարայարկ դուռն կանգնեց սրբատաշ քա-
րով. որոյ ներքին ելքը դէպի ի վեհարան՝
երկու կողմից քարէ սանդուղներով բարձ-
րացան. և այս զբան ներսի կամարայարկի
վրայ՝ տախտակամած և գեղագործեալ
նոր դուռն կանգնեց դէպի ի Ա-Կ-Հարան
շրջափակ ապակի լուսամուտներով, զրե-
թէ Կաթուղիկոսարանի կիսարամնի մէջ,
այն տեղ՝ ուր Յովհաննէս Կաթուղիկոսն
ևս դուռն էր թողել, բայց Կերսէս Կա-
թուղիկոսը փակեց:

Իսկ զբատան մուտքը՝ որ բոլորովին ան-
յարմար էր Վ-Ժոռոյս մեծ վայելչութեան,
և տանեաց Ճանապարհով Ա-Կ-Հարանի

միջով կելանէին ի վեր այցելուք, գեղեցիկ
և յարդարել տուաւ:

Գրատան դուռը՝ որ կրացուէր արեւմտից
գանձարանի կարգնեղած ներքնայարկ սեն-
եակների տանեաց վրայ, արեւմտեան լոյ-
նութեան հաւասար շինել տուաւ տախ-
տակամած մեծ սրահ գրատան դուռը մեջ
առնլով. զարդարեց նստարանօք և յար-
դարեց զայն ընթեցարան միաբանից. որոյ
շենքը կցով ի հարաւոյ Ա եհարանի հետ,
ներքուստ մինչ ի վեր կանգնեց սանդուխը,
ճախորակաւոր և դրան տաւածի պատշգա-
մը՝ գոյնզգոյն ներկով գեղագործած՝ դրան
բարձրութեանը հաւասար մեծ մեծ լու-
սամուաներով զարդարեց:

Դազարապատ ասացեալ հիւրանոցը, որ
խախտացած էր վաղուց, բոլորը նորոգել
տուաւ և շրջապատ տախտակամած ձե-
մելիքը սենեկաց յառաջ հանդերձ սան-
դուղներով նոր ի նորոյ շինեց:

Եթոռոյս մեծակառոյց և հոյակապ Ռ'ե-
մարանը ևս նոյն թուականէն 1869, ըս-
կաւ շինել Եկեղեցւոյ խորանաց հետ,
որոյ հիմնարկութեան հանդէսը նոյն տա-
րուայ մարիսի ամսին Եկեղեցական օր հնու-
թեամբ կատարեց. և երկու տարում պա-
տից շինութիւնը տաւարտեց՝ երեսներն
կոփածոյ քարով, որու ներքին փայտե-
ղէն և տատաղձագործ բովանդակ պարա-
գայքն ու գեղագործութիւնքը չորս տա-
րուայ միջում լրացան:

Ի մեծ վայելութիւն նորակառոյց Ռ'ե-
մարանին որպէս և գիւղին առ հասարակ,
Եթոռոյ պարապի հիւսիւսային դրան ա-
ռաջի երկայն հրապարակն ընդ մեջ պարա-
պին և գեղջ, ուր որ յառաջն գիւղացւոց
նախիրը կժողովէր առաւօտ և երեկոյ, և ոչ

ասկաւ օդոյ անմաքրութիւն կպատճառէր,
յարդարել տուաւ հասարակաց պարակեղ
(բուլվար) դրան յառաջէն պարսպի եր-
կայնութեամբ ի ծայրէ ի ծայր՝ մինչև Ռ'ե-
մարանի յառաջը. երեք հարիւր քսան և
չորս կանգուն երկայնութեամբ և իննսուն
կանգուն լայնութեամբ, ուր վայրի և ըն-
անի նորատունկ ծառեր կարգ ըստ կար-
գէ տնկելով, բոլոր շրջապատը դեղագոր-
ծեալ միւնեակներով ցանկապատեց. որ սո-
ժը ոչ սակաւ գիւղի անշըութեանը շուք
և քաղաքի կերպարանք կտայ ի մեծ զը-
ուարձութիւն թէ ծառայողաց քաղա-
քական կառավարութեան որ ի Ա աղար-
շապատ ամառ ժամանակին, և թէ բոլոր
գիւղացւոց զրօսանք՝ եկին և օտարին:

Լ ճակի եղելքը՝ որ Ճեմելու համար եր-
կու կարգ շրջապատ ֆարշած էր կոփածոյ
քարով, մի կարգ ևս աւելցած էր Մատ-
թէս Կաթուղիկոսի օրով. այս եղերաց
ուղղութեամբ երեք կարգ ծառերով շըր-
ջապատ զարդարեց, որ ամառ մեծ վա-
յելութիւն կտայ ճակին, և Ճեմողաց ոչ
սակաւ զրօսանք:

Ենտառի արեւմտեան կողմէն կից նորան
նոյն երկարութեամբ և լայնութեամբ նոր
անտառ ձգեց, բոլոր լիռնային և վայրի
նորատունկ ծառերով. որոց կէս մասին ծա-
ռերը վերուստ ի վայր ձգուած են և հա-
սունացած. ուստի բոլոր անտառը ապա-
հով պահպանելու համար՝ շրջապատ պա-
րըսպից:

Դ աղարշապատայ Կաթուղիկէ Եկե-
ղեցւոյ սասրապրութիւնը ամբողջացը-
նելու համար՝ հարի էր առնել և նորա
տեղագրութիւնը ըստ կարգի. ըստ որում
երեքին նորաշն խորանները միացոծ են

ասձարի հետ, բայց ըստ որում յիշեալ խորանաց շինութիւնքն արդէն ստորագրեցինք, աւելորդ կհամարինք կարգել Եկեղեցւոյ տեղագրութիւնն էլ, թողլով ընթերցողաց տեսնել զայն յԱռաքել պատմագիրն և Շահնշահ. Յովհաննէս և պիտիոպոսի Կաթուղիկէ Եկեղեցւոյ Առաջարութեան մէջ:

Բ. Եկեղեցն ունոյն ժոհեակաց.

Վաղարշապատոյ երկրորդ Եկեղեցին՝ զոր շինեց սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր սրբոյն Հռիփսիմեայ կուսի գերեզմանի վրայ՝ զոր փորեց սուրբն Տրդատ, նոյն քաղաքի հիւսիսային արևելեան կողմն է, քառորդ ժամու հեռաւորութեամբ, այն հնձանատեղւոյ վրայ, ուր որ պատսպարուած էին սուրբ Կուսանքն, և ուր նաշատակուեց սուրբ Հռիփսիմէ իւր ընկերներով, և վանքն կառուցաւ նորա իսկ անուամբ ի 301 թուականին:

Մատուռն գերեզմանին Հռիփսիմայ, որոյ մէջ զրուած է և արկդն նշանաց՝ է ուղղակի սեղանիքնի տակին, փոքրիկ կամարակապ՝ երկայն՝ մարդաշափ բարձրութեամբ, որոյ մուտքն կրացուի հիւսիսային կողման խորանի մէջ երեք աստիճանաւ գեպ իներս:

Գրիգոր Լուսաւորչի շինած Եկեղեցին Հռիփսիմէի գերեզմանի վրայ, թէ ի՞նչ նիւթից էր կամ ի՞նչ ձե, Ըգաթանգեղոս չի յիշատակեր, այլ միայն սուրբ կուսի գերեզմանի համար կորէ թէ նա ինքն Տրդատ փորեց սրբոց գերեզմանատեղը արկեղաց չափով, զոր սուրբն Գրիգոր տուաւ նորան, որ նոցա մէջ շինեց նոցա հանգստան մալտիքստական յարկը (Ե-

զաթան, եր. 287), միայն յետագայ պատմիչք կաւանդին տաճարի շինութիւնը ի սուրբ Լուսաւորչին: Խնչպէս յառաջ կը բերինք:

Լուսաւորչու շինած սրբոյն Հռիփսիմայ տաճար Շապհոյ զօրքը կործանեց 380 փրկչական թուին. զոր ապա տան և հինգ տարիէն եաքը 395, սուրբն Սահակ Պարթև նորոգեց, և յանդէաս բանելով սրբոց տապանատեղին, տեսաւ սուրբ Լուսաւորչի կնիքը սուրբ կուսի տապանի վրայ. յորմէ իւր փափաքն առներով, առանց բանալոյ արկդն, ինքն ևս կնքեց:

Ե.յս երկրորդ շինութեան վրայ երբ որ անցել էր արգին երկու հարիւր քսան երեք տարի, Կոմիտաս Կաթուղիկոս՝ որ նախ Փակակալ էր Հռիփսիմեայ վանից, ինչպէս պատմիչք կվկայեն, իւր Կաթուղիկոսութեան իսկ առաջին տարում 618 թուին՝ Սահակ Հայրապետի ժամանակին շինուածցած ու մթին շինուածքը քակելով, պայծառ և վայելուչ ևս շինեց Հռիփսիմեայ կուսի Եկեղեցին կոփածոյ քարով, լայնանիստ կաթուղիկէիւմ շրջապատ պատշգամով իներքուստ. և արտաքուստ շրջանակը և լուսամտաց կիսարուրակ կամարները բոլոր փորուածոյ դըրուագներով, և տանեաց վրայ Կաթուղիկէի չորս կողմը չորս բոլորակ սենեակներ, որոյ գուռը կբացուի պատշգամիի մէջէն:

Կոմիտաս Կաթուղիկոսի այս շինուաթեան համար կիվկայէ նորա ժամանակակից Աերիոս Եպիսկոպոս պատմիչն եօթներրորդ գարում, այսպէս:

“Յամի Եթ. թաղաւորութեան Եպիմում կառուց քակեաց Կաթուղիկոսն

Կոմիտաս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայի Աղարշապատ քաղաքի, զի կարի ցած և մթին էր շնուածն. զոր շնեալ էր սրբոյն Աահակայ Հայրապետի Հայոց Կաթողիկոսի որդուոյն սրբոյն Կերսիսի,, :

Եյս շնութեան ժամանակ ևս սուրբ Կոմիտասի դագաղը հանելով Կոմիտաս, և Համարձակելով բանալ, որու վրայ տեսաւ Լուսաւորչի և մեծին Աահակայ կնիքը, ինքն ևս կնիքեց, և այնպէս բացօթեայ թող ասպով դագաղը յուխտ և ի համբոյր ժողովրդոց, Եկեղեցու շնութիւնը լաւ ցամաքելէն ետքը՝ արկղը ամփոփեց վերստին իւր կայանին մէջ :

Կոմիտաս Կաթուղիկոսի Հռիփսիմեայ վանքի այս շնութիւնը կյիշատակին յետագայ պատմիչք ևս՝ ինչպէս Յովհաննէս Կաթուղիկոս յինները որդի գարում, Աահականնոս Ասողնիկ տասներորդին մէջ, բայց Կոմիտասայ ժամանակակից պատմագրի վկայութիւնը բաւական համարեցինք վասրն հաստատութեան միայն յառաջ բերել, մեր սառագրութիւնը աւելորդ տեղը չի երկարացնելու համար: Միայն յիշեալ Հայրապետի շնութեան արձանագրը աստ կօրինակենք, որ կայ յիշեալ Եկեղեցւոյ արևմտեան դրան կամարէն վիրումի մէջ, ըստ այսմ:

“Ես Կոմիտաս եկեղեցապահ սրբոյ Հռիփսիմէի, կարգեցայ յԵթոռ սրբոյն Գրիգորի, և շնեցի զամար սրբոց վկամից Գրիսասոսի,, :

Հռիփսիմեայ վանքի այս շնութիւնը Կոմիտաս Կաթուղիկոսէն՝ յլնթացս տասրն դարուց՝ 618—1653 ժամանակի աշխարհքի բոնութեանց դէմ զբեթէ մաքառելով և անհնարին փոփոխութիւններ

կրելով՝ կէս մի ամայութեամբ՝ կէս մի աւելանքով, անցուցել էր արդէն այդ դարաւոր ժամանակները. երբ որ Պարսից և Օսմանցւոց փոխադարձ պատերազմաց երեաէն փոքր մի խաղաղութիւն գտնելով Հայաստան՝ Ազգիս Կաթողիկոսունք վերստին սկսան նորոգել Աղարշապատայ կաթուղիկէն՝ և վերստին տարագիր ու Հալածուած հոգեւոր միաբանութիւնը ժողովել այդ Աստուածահածոյ պատսպարանների մէջ, ի գութ շարժեցաւ Փիլիպպոս Կաթուղիկոսը Կաթուղիկոսական տան շնութեանց հետ՝ և Հռիփսիմեայ վանքի բոլոր աւելանքը շնել, և եկեղեցւոյ քայքայեալ որմերը, տանիքը և այն ամենայն սրբատաշ քարով նորոգել. ուրո՞ք զբեթէ բոլորն ի հիմանց նոր ի նորոյ շնեց միաբանք կարգելով անդ, ի 1653 թուին. որ յառաջ անմարդաբնակ և ամայի էր. որոյ և արձանագրին Կոմիտաս Կաթուղիկոսի արձանագրի ներքեւ կտեսնուի ըստ այսմ:

“Ի թուին ՈՒԴԻ (1653) Վրիստոսի ծառայ Փիլիպպոս Կաթուղիկոս ամենայն Հայոց վերստին նորոգեցի զի կեղեցիս սրբոց կուսանացն Հռիփսիմեայ և Գայ յիաննեայ,, :

Եղեազար Կաթուղիկոսն ևս՝ որ շատ եկեղեցիք շնեց, որոց համար Աիմոն Կաթուղիկոս կվկայէ, Հռիփսիմէի վանքի մէջն ևս բաւական նորոգութիւններ արաւ:

Աիմոն Կաթուղիկոսի շնութեանց ժամանակ ի Կաթուղիկէն, նորա սպասաւոր Մկրտիչ եպիսկոպոսը իւր արդեամբ և ի յիշատակ Հռիփսիմեայ վանաց քառակուսի պարիսով շնեց չորս բրդով, հիւ-

սիսային կողմը կանգնելով կամարակապ մեծ դուռն. որու արձանագիրն դրուածէ զրան կամարի մէջ, ի ՌՄԴՆՆ, 1776. թուին:

Խսկ 1790 թուականին՝ Պուկաս Կամթուղիկոսն Փիլիպպոսի շնած Աշկեղեցւոյ փոքրիկ գաւթի վրայ կառուցանել տուաւ վայելուչ Կաթուղիկէ սրբատաշ քարով չորս սեան վրայ, Պուղայեցի Խաչիկ իշխանի արդեամբք, որ կրնակէր Հնդկաստանի Կալկաթայք քաղաքը. և սուրա շնուռթեան արձանագիրն է զանգակատան մէջ՝ զրան հիւսիսային կողմը, նոյն թուականում:

Տաճարի շէնքը դրսի կողմէն քառակուսի է բայց ներքուստ բոլորչի, ըստ որում որմասիւները հիւսիս և հարաւային որմեռէն յառաջ գալով՝ բոլորչի ձև են կացուցել ներքուստ՝ որոց վրայ է լայնանիստ Կաթուղիկէն. ճապաղած արտաքուստ տանեաց վրայ, միջի կողմը ունի Կաթուղիկէն շրջապատ պատշգամբ. որոց մէջ կրացուի Կաթուղիկէի չորս կողմը շնած տանեաց վրայ բրդածեւ սենիկաց դռները, որով և չորս լուսամուտ միայն ունի լայնանիստ Կաթուղիկէն:

Ունի մի սեղան պատարագի և չորս խորան առաջին և յետին դասերի կողմանկան անկիւններում, և այն արժանայիշատակ Կաթուղիկոսաց գերեզմանները կան տաճարի մէջ, որոնք սկսած Կոմիտաս Կամթուղիկոսէն՝ նորոգել են Հոհիսիմէի վանքը կամ շնութիւններ արել. բեմի առաջին Կոմիտաս Կաթուղիկոսի տապանն է. որոյ տապանաքարն հաւասար է սալայատակի հետ, որ ի սկզբանն այնպէս վայելուչ կոփի ածոյ քարով կանգնեց այս տաճ-

ճարը եօթներորդ դարու Ճարտարութեամբ:

Փիլիպպոս կաթուղիկոսի դամբարանը աջակողմեան դասի հիւսիսակողմն է բարձր տապանաքարով, որ տաճարի վերջին վայելացնողն է և շնացնողը դարաւոր ամայութենէ:

Խսկ արեւմտեան զրան առաջին արտաքուստ զանգակատան ներքեւ երկուց Կաթուղիկոսաց գամբարանները կան՝ Կարապիտ և Վատուածատուր Կաթուղիկոսաց: Պարսպի միջին ևս կան քանի մի շերիմշներ, որոց մէջ նշանաւորն է Լէհացի Ասեփաննոս վարդապետինն. որ երեկի է իւր պատկերահանութեամբ և զրաւոր վաստակովք:

Ոիմէոն Կաթուղիկոսի օրէն սկսեալ, երբ որ պարիսազը շնուռեց, բովանդակ Պարսից իշխանութեան ժամանակ շարուանակ վանահայր կնստէր Հոհիսիմէի վանքը, օրական հաց և կերակուր կտանէին Վաթուէս. Պարսից վերջին բռնաւորութեանց երեսէն ստիպուած ժողովուրովը շատ տեղերէ իրենց որդիքը ապահովիլով՝ յԱշմիածին իրեւ տեղի ապաւինի՝ կտային ի հոգեւորականութիւն. մինչեւ վաթուուն աշակերտք Վթոույ կառավարէչը կպատսպարէին Հոհիսիմէի վանքի մէջ, նոցա սնունդ և հանգերձը հոգալով յԱթթուոյ:

(Ե-Ր-Ճ-Ճ-Ք-Ք):

ԱԱՅ ԱՐՔԵԳԻՍԱՊՈՅՈՒ

